ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆԸՆԵՐԸ ՆՈՐԸՆՏԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻՆ ԵՎ ՎԱՐՉԱՊԵՏ ՎԱԶԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորական հետեւյալ ուղերձն է հղել Հայաստանի Հանրապետության Նորընտիր Ազգային Ժողովի նախագահ Կարեն Դեմիրճյանին:

«Մեծարգո Նախագահ,

Սրտի խոր գոհունակությամբ, անձնապես եւ հանուն Ամենայն Հայոց Կաթողիկոսության, մեր ողջ հայ ժողովրդի հոգեւոր կենտրոնից՝ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնից ողջունում եւ շնորհավորում ենք Ձեր ընտրությունը՝ որպես նախագահ Հայաստանի Հանրապետության Նորընտիր Ազգային Ժողովի:

Աղոթում ենք առ ամենակարողն Աստված, որ Ձեզի շնորհի քաջառողջություն, անսահման իմաստություն եւ աննկուն կորով: Վստահ ենք, որ Ձեր աստվածատուր կարողությունները եւ տարիների փորձը կօգնեն Ձեզ փառավորապես ի գլուխ հանելու Ձեզի վստահված պարտավորությունները հայրենի օրինաստեղծ Ազգային Ժողովում:

Բյուր օրհնություն մեր քրիստոնեական հավատքի օջախից՝ Սբ. Էջմիածնից:

Հայրական սիրով եւ Հայրապետական օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Մեկ այլ նամակով Վեհափառ Հայրապետը շնորհավորել է Հայաստանի նոր նշանակված վարչապետ Վազգեն Սարգսյանին: Նամակում մասնավորապես ասվում է.

«Մեծարգո Վարչապետ,

Սրտի խոր գոհունակությամբ եւ անհուն ուրախությամբ իմացանք Ձեր նշանակումը՝ որպես Վարչապետ Հայաստանի Հանրապետության:

Այսու Հայրապետական գրով, անձնապես եւ հանուն Ամենայն Հայոց Կաթողիկոսության, Մայր Աթոռի միաբանության եւ Գերագույն Հոգեւոր Խորհրդի, ջերմորեն շնորհավորում ենք Ձեզ այս նոր բարձրորեն պատասխանատու պաշտոնին կոչվելու առիթով:

Վստահ ենք, որ Ձեր իմաստությամբ, արիությամբ եւ նվիրվածությամբ կանեք գերագույն կարելին Հայաստանի պետականության ամրապնդման եւ բարգավաճման համար՝ հանուն մեր սիրեցյալ ժողովրդի ապահով եւ բարօր կյանքի: Հայաստանյայց Առաքելական Մայր Եկեղեցին ինչպես միշտ զորավիգ կլինի հայրենի կառավարության ազգ եւ երկիր շենացնող ձեռնարկումներին:

Հայրական սիրով եւ Հայրապետական օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ